ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

4 օգոստոսի 2015թ. **N 55-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԼՈՌՈՒ, ԿՈՏԱՅՔԻ, ՇԻՐԱԿԻ, ՍՅՈՒՆԻՔԻ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 30-ի N 14-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ.

1) Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի մի շարք համայնքներում 2015 թվականի սեպտեմբերի 13-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններին տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 30-ի N 14-Ն որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով,

2) տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ 14-ական,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)՝ 9-ական,

Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք (ՀԱԿ)՝ 2-ական,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)՝ 2-ական,

«Օրինաց Երկիր» կուսակցություն (ՕԵԿ)՝ 2-ական,

«Ժառանգություն» կուսակցություն (ԺԿ)՝ 2-ական,

ա. տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները ըստ ընտրական տեղամասերի, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև համապատասխանաբար բաշխվել են՝

Համայնքի անվանումը	ՏԸՀ	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար
Ղազարավան	14/1	ՀՀԿ	ԲՀԿ
Շղարշիկ	15/1	ՀՀԿ	ՀԱԿ
Տանձուտ	20/1	ՀՀԿ	ԲՀԿ
Նոր Կեսարիա	21/1	ՀՀԿ	ԲՀԿ
Գեղարքունիք	22/1	ԲՀԿ	ՀՀԿ
Լճափ	22/1	ԺԱՌԱՆԳ.	ԲՀԿ
Գետիկ	23/1	ՀՀԿ	ԲՀԿ
Ֆանտան	26/1	ՀՀԿ	ԲՀԿ
Զառ	27/1	ՀՀԿ	ՕԵԿ
Մրգաշեն	27/1	ՀՀԿ	ԲՀԿ
Ողջաբերդ	27/1	ԲՀԿ	ԺԱՌԱՆԳ.
Անտառամուտ	31/1	ՀՀԿ	ՀԱԿ
Եղեգնուտ	31/1	ԲՀԿ	ՀՀԿ
Չկալով	31/1	ՀԱԿ	ՀՀԿ
Լեռնագյուղ	33/1	ՀԱԿ	ՀՀԿ
Ողջի	33/1	ԲՀԿ	ՀՀԿ
Մարալիկ	36/1	ԲՀԿ	ՀՀԿ
Մարալիկ	36/2	ՀՀԿ	ՀՅԴ
Մարալիկ	36/3	ՀՅԴ	ՀՀԿ
Արևիս	37/1	ԲՀԿ	ՀՀԿ
Գողթանիկ	39/1	ԲՀԿ	ՀՀԿ
Խաշթառակ	40/1	ՕԵԿ	ՀՅԴ
Սարիգյուղ	40/1	ՀՅԴ	ՀՀԿ
Իջևան	41/1	ՀՀԿ	ԲՀԿ
Իջևան	41/2	ՕԵԿ	ՀՀԿ
Իջևան	41/3	ՀՀԿ	ԲՀԿ
Իջևան	41/4	ՀՀԿ	ԺԱՌԱՆԳ.
Իջևան	41/5	ՀՀԿ	ՕԵԿ
Իջևան	41/6	ԲՀԿ	ՀՀԿ
Իջևան	41/7	ԺԱՌԱՆԳ.	ՀՀԿ
Իջևան	41/8	ԲՀԿ	ՀՀԿ

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2015 թվականի օգոստոսի 14-ից մինչև օգոստոսի 19-ը, մինչև՝ ժամը 18:00-ն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**